ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 24

16 մայիսի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, □Քաղաքաշինության մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը՝ (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:
2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված □Քաղաքաշինության մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի □Կառուցապատման համար նախատեսված տարածքների բաշխումն ըստ նպատակային նշանակության փոփոխությունների□ գծագրին (այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
NN	Տարածքի մակերեսը (հա)	Կառուցապատման փուլեր	Առկա նպատակային նշանակությունը	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը
1.	2.	3.	4.	5.

1.	5.7	միջնաժամկետ (5-10 տարի)	գյուղատնտեսական	բնակավայրի
2.	13.2	հեռանկարային (10-15 տարի)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	բնակավայրի
3.	18.5	առաջնահերթ (մինչև 5 տարի)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	բնակավայրի
4.	2.9	հեռանկարային (10-15 տարի)	գյուղատնտեսական	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
Ընդամենը	40.0			

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և □Քաղաքաշինության մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամսերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հյուսիս – հարավ ճանապարհային միջանցքի նախագծային աշխատանքների ավարտից հետո, անհրաժեշտության դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխություն կատարել Գլխավոր հատակագծում:

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ - ԿՈՂՄ

Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ